| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|---|
| 5 | Հոկտեմբեր | 2018 թ. | | Ա | 6541499420 |
| [4] Մատակարարման ամսաթիվ | | | | Ճշգրտվող հաշվի | |
| 4 | Հոկտեմբեր | 2018 թ. | | Սերիա | Համար |
| | | | | | |
| | | | | Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | | | | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

| Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 5 2 7 6 2 4 |
| [9] Անվանումը | «ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ Հիմնադրամ |
| [10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 5 2 7 6 2 4 / 1 |
| [11] Բանկային տվյալները | Արարարատ բանկ N 1510002308480100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 17 |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

| Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [18] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | Նարինե Ստեփանյան |
| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն: Լիազորագիր: Համար: Ամսաթիվ: |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (քանակաչափը) | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | դատահոգեբանական փորձաքննություն (գործ 17104618) | հատ | 1 | 32833.33 | | 32833.33 | 20 | 6566.67 | 39400 |
| Ընդամենը | | | | | | 32833.33 | X | 6566.67 | 39400 |

Դուրս գրող՝ HARUTYUNYAN SUSANNA 7314730458
անունը, ազգանունը

Ստացող՝
պաշտոնը՝ ստորագրությունը՝ (անունը, ազգանունը)
պաշտոնը՝ ստորագրությունը՝ (անունը, ազգանունը)

05/10/2018 12:00:56

# ՈՐՈՇՈՒՄ

Փորձագետ ճանաչելու մասին.

« 04 » սեպտեմբերի 2018թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Ս.Գալստյանս, քննարկելով վարույթիս թիվ 17104618 քրեական գործի նյութերն.

## ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 21:40-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի Ավանի բաժանմունք է զանգահարել "Ֆաստ Կրեդիտ Կապիտալ" ՓԲԸ-ի անվտանգության պետ Ատոմ Ժորժիկի Պողոսյանը և հայտնել, որ զենքով մտել են կազմակերպություն և գումար տարել:

Դեպքի առթիվ 2018 թվականի ապրիլի 3-ին կազմակերպության իրավաբանական վարչության պետ Նելլի Ղարիբի Պապյանի տված հաղորդումով և նախապատրաստված նյութերով պարզվել է, որ 2018 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, անհայտ անձը՝ դիմակավորված, զենքով և նռնակով զինված, մուտք է գործել Երևան քաղաքի Խուդյակով 69/1 հասցեում գործող «Ֆաստ կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Ավան մասնաճյուղ և այնտեղ գտնվող հաճախորդի և աշխատակիցների կյանքի համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով, այն է՝ նռնակը գործադրելու և ներկա գտնվողներին սպանելու, գումար է պահանջել: Մասնաճյուղի ոսկերիչ Հրայր Դանիելյանը, սպառնալիքի ազդեցության տակ անհայտ անձին է հանձնել 6.341.000. ՀՀ դրամ գումար, ով վերցնելով գումարը, դեպքի վայրից դիմել է փախուստի:

03.04.2018 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17104618 քրեական գործը և ընդունվել վարույթ:

Նախաքննության ընթացքում 23.06.2018 թվականին ՀՀ ԱԱԾ և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՔՀ բաժնի ծառայողներին է ինքնակամ ներկայացել Հայկ Էդիկի Ալթունյանը (ծնված՝ 28.08.1989թ., հաշվառված՝ Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 6-րդ միկրոշրջան 5Բ շենք 23 բնակարան, փաստացի բնակվող՝ Կոտայքի մարզ, Աբովյան, 6-րդ միկրոշրջան, 2-րդ թաղամաս 62 հողակտոր) և հայտարարել, որ 02.04.2018 թվականին՝ ժամը 21:30-ին դիտավորությամբ ատրճանակով ու նռնակով զինված մուտք է գործել Երևան քաղաքի Խուդյակով փողոցի 69/1 հասցեում գտնվող «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՓԲԸ մասնաճյուղ և բռնություն գործադրելու սպառնալիքով հափշտակել է 6.000.000 ՀՀ դրամից ավել գումար:

24.06.2018 թվականին՝ ժամը 02:00-ին, Հայկ Էդիկի Ալթունյանը 02.04.2018 թվականին Երևան քաղաքի Խուդյակով փողոցի 69/1 հասցեում գտնվող «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՓԲԸ մասնաճյուղից կատարված ավազակային հարձակման և ապօրինի կերպով հրազեն և ռամամթերք կամ պայթուցիկ սարքեր պահելու կասկածանքով ձերբակալվել է և ուղարկվել ՀՀ ոստիկանության ՁՊՎ:

Նախաքննության ընթացքում որպես կասկածյալ հարցաքննված Հայկ Էդիկի Ալթունյանը ցուցմունք է տվել այն մասին, որ վերջին երկու տարվա ընթացքում կուտակել է մոտ 25.000 ԱՄՆ դոլար պարտք, և «Այվենդինգ» ՍՊԸ-ում որպես սուրճի սարքավորումների սպասարկող ստացած ամսեկան 200.000 ՀՀ դրամով հիշյալ պարքը

մարել չկարողանալով, մտքին անընդհատ եկել է որևէ հանցավոր ճանապարհով գումար հայթայթելու և պարտքերը մարելու գաղափարը և 2018 թվականի մարտ ամսվա վերջերից մոտ մեկ շաբաթ անընդհատ մտածել է որևէ բանկից կամ ֆինանսական հաստատությունից գումար գողանալու մասին և շրջել է Երևան քաղաքով՝ հափշտակություն կատարելու համար որևէ հարմար վայր գտնելու ակնկալիքով: Որպես այդպիսի հարմար տեղ ընտրել է Երևան քաղաքի Ավան թաղամասում գտնվող «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի մասնաճյուղը և 2018 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, «Այվենդինգ» ՍՊԸ-ին պատկանող և իր կողմից վարվող «Volkswagen Golf 3» մակնիշի ավտոմեքենայով Երևան քաղաքի Հանրապետության Հրապարակից ուղևորվել է Երևան քաղաքի Նոր Նորքի 2-րդ զանգվածում գտնվող հանրակացարանների մոտ, որտեղ հիշյալ մեքենայի միջից վերցրել է նախորոք դրանում դրված և իր կողմից դեռևս 2017 թվականի դեկտեմբերին գնած պնևմատիկ տեսակի ատրճանակը, նռնակի նմանվող կրակայրիչը, մեկ հատ էլեկտրահարող սարք, մեկ հատ արցունքաբեր գազ արձակող սարք, նախորոք տնից վերցրած բանվորական կանաչ գույնի բաճկոն, բանվորական տաբատ, սև գույնի բրդյա գլխարկ՝ դիմակ օգտագործելու համար նախորոք աչքերի հատվածը կտրած վիճակում, նարնջագույն ձեռնոցներ, հագել է հիշյալ բաճկոնը, դրել ձեռնոցները, հագել գլխարկը, բաճկոնի գրպաններում տեղավորել հիշյալ ատրճանակը, նռնակի նմանվող կրակայրիչը, էլեկտրահարող սարքը, արցունքաբեր գազ արձակող սարքը և թողնելով նշված մեքենան հանրակացարանների վերջին մասնաշենքի մոտ, քայլելով գնացել է Երևան քաղաքի Խուդյակով 69/1 հասցեում գործող «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Ավանի մասնաճյուղի դիմացի մայթին գտնվող այգին, որտեղ հարմար պահ ընտրելով՝ նույն օրը՝ ժամը 21:30-ի սահմաններում, դիմակավորված, ձեռնոցներով, աջ ձեռքում ատրճանակ, ձախ ձեռքին նռնակի նմանվող կրակայրիչ բռնած՝ մուտք է գործել հիշյալ գրավատուն, հաճախորդների սրահում կանգնած հաճախորդին ատրճանակի սպառնալիքով պահանջել է պառկել գետնին, որից հետո ատրճանակով կրակելու և նռնակը պայթեցնելու սպառնալիքներ հնչեցնելով պահանջել է գրավատան աշխատակիցներին իրեն տալ գումար՝ հաճախորդների սպասարկման պատուհանի տակով անցկացնելով իր մոտ եղած պոլիէթիլենային տոպրակը: Այնուհետև գրավատան աշխատակցի կողմից նշված պոլիէթիլենային տոպրակում լցված գումարները վերցնելով՝ հաճախորդին պահանջել է իր հետ դուրս գալ գրավատնից, որից հետո անցնելով գրավատան կողային հատվածը՝ դիմել է փախուստի, մոտ երկու ժամ թաքնվել իր փախուստի ճանապարհին եղած շենքերից մեկի տանիքում, այնուհետև դուրս է եկել, գնացել իր մեքենայի մոտ և մեքենայով ուղևորվել Աբովյան քաղաք: 23.06.2018 թվականին իր կատարած ավազակային հարձակման մասին պատմել է ՀՀ ԱԱԾ աշխատակից Սարգիսին, քանի որ հասկացել է, որ իր ունեցած պարքերի պատճառով ծրագրում է ավելի ծանր հանցագործության կատարում, ինչը կանխելու և չկատարելու նպատակով իր կատարած ավազակային հարձակման մասին հայտնել է հիշյալ Սարգիսին՝ համանալով, որ է վերջինս այդ մասին կհայտնի ՀՀ ոստիկանության համապատասխան մարմիններին:

Նախաքննության ընթացքում կասկածյալ Հայկ Էդիկի Ալթունյանի մասնակցությամբ կատարվել է քննչական փորձարարություն, որի ընթացքում վերջինս հաստատել է որպես կասկածյալ տված իր նախաքննական ցուցմունքը՝ ցուցադրելով հանցանքի կատարման ողջ ընթացքը: Քննչական փորձարարության ընթացքում Երևան քաղաքի Վարդանանց 69 հասցեում գտնվող «Դինամո» ՄՀԿ-ի պահակակետից հայտնաբերվել և վերցվել են ատրճանակ, նռնակի նմանվող կրակայրիչ, էլեկտահարող սարք,

արցունքաբեր գազ արձակող գլանակ, կփչուն ժապավեն, ամրակներ: Քննչական փորձարարության ընթացքում Հայկ Ալթունյանը հայտարարել է, որ հիշյալ ատրճանակը, նռնակի նմանվող կրակայրիչը 02.04.2018 թվականին կատարած ավազակային հարձակման ժամանակ գործադրած նույն իրերն են, իսկ էլեկտահարող սարքը և արցունքաբեր գազ արձակող գլանակն ինքը դեպքի օրը պահած է եղել իր բաճկոնի գրպաններում:

26.06.2018 թվականին Հայկ Ալթունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով այն հանրորեն վտանգավոր արարք կատարելու համար, որ նա որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ ավազակային հարձակում է գործել «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Ավանի մասնաճյուղի վրա և հափշտակել առանձնապես խոշոր չափի կանխիկ գումար:

**Այսպես՝** Հայկ Ալթունյանը, կուտակելով բազմաթիվ գումարային պարտավորություններ, իր ունեցած պարտքերը մարելու նպատակով, ավազակությամբ ուրիշի գույքի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, 2018 թվականի ապրիլի 2-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, դիմակավորված, ձեռնոցներով, որպես զենք օգտագործվող առարկաները՝ 4.5 մմ տրամաչափի, «16K72021» գրառմամբ պնևմատիկ տեսակի ատրճանակն աջ ձեռքին, իսկ նռնակի նմանվող կրակայրիչը ձախ ձեռքին, հարձակում է գործել Երևան քաղաքի Մարշալ Խուդյակով փողոցի 69/1 հասցեում գործող «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Ավանի մասնաճյուղ և ատրճանակն ուղղելով հաճախորդների սպասարկման սրահում կանգնած հաճախորդ Վոլոդյա Սիմոնյանի վրա՝ պահանջել է պառկել գետնին, այնուհետև «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի աշխատակիցներ՝ գանձապահներ՝ Արման Շատվորյանից, Լուսինե Թորոյանից և ոսկերիչ-գնահատող Հրայր Դանիելյանից՝ կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու, այն է՝ նռնակը պայթեցնելու և ատրճանակով կրակոցներ արձակելու սպառնալիքով, պահանջել է դրամարկղերում առկա գումարները՝ հաճախորդների սպասարկման դրամարկղի պատուհանի տակով պոլիէթիլենային տոպրակը փոխանցելով Արման Շատվորյանին, ով վախենալով Հայկ Ալթունյանի կողմից տված սպառնալիքների իրականացումից՝ հիշյալ տոպրակի մեջ է լցրել դրամարկղերում առկա առանձնապես խոշոր չափերի՝ 6.341.000 ՀՀ դրամ կանխիկ գումար: Հայկ Ալթունյանը, շարունակելով ատրճանակի և իր ձեռքում առկա նռնակի գործադրմամբ վերջիններիս կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքներ տալը, պատուհանի տակից վերցրել է հիշյալ գումարով լի պոլիէթիլենային տոպրակը, ատրճանակի սպառնալիքով Վոլոդյա Սիմոնյանի հետ դուրս եկել գրավատնից և դիմել փախուստի:

Առաջադրված մեղադրանքում Հայկ Ալթունյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և պնդել է որպես կասկածյալ տված իր ցուցմունքները:

26.06.2018 թվաքկանին որոշում է կայացվել միջնորդություն հարուցել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ թիվ 17104618 քրեական գործով մեղադրյալ Հայկ Էդիկի Ալթունյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառել կալանավորումը՝ 2 ամիս ժամանակով, որը դատարանի կողմից բավարավել է՝ Հայկ Ալթունյանի կալանավորման սկիզբը հաշվելով 2018 թվականի հունիսի 23-ի՝ ժամը 22:30-ից:

29.06.2018 թվականին ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնից *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի կարգով ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին է ստացվել թիվ 14189918 քրեական գործը և*

*ընդունվել վարույթ:Պարզվել է, որ* «Այվենդինգ» ՍՊԸ տնօրեն Արման Կլջյանը 2018 թվականի հունիսի 4-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն ՍՊԸ առաքիչ և վարձակալ Հայկ Էդիկի Ալթունյանը ընկերությունում աշխատելու ժամանակ կատարել է առանձնապես խոշոր չափերի յուրացում:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Հայկ Ալթունյանը ընկերության տնօրեն Արման Կլջյանի հետ 01.09.2015թ. կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն հանդիսանալով ընկերության առաքիչ, աշխատանքի անցնելուց հետո մինչև 29.05.2018թ. ընկած ժամանակահատվածում, իրեն հանձնված ուրիշի գույքի զգալի չափերով յուրացում կատարելու դիտավորությամբ, Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում տեղակայված ընկերությանը պատկանող թվով 12 սուրճ պատրաստելու համար նախատեսված սարքավորումներից յուրացրել է զգալի չափերի՝ ընդհանուր 420.000 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, Հայկ Ալթունյանը, «Այվենդինգ» ՍՊԸ տնօրեն Արման Կլջյանի հետ 08.01.2018թ, 01.03.2018թ., 01.04.2018թ. և 10.10.2017թ. կնքված վարձակալության պայմանագրերի համաձայն Երևան քաղաքի Ադոնցի 10 հասցեից վարձակալությամբ վերցնելով թվով 10 հատ սուրճ պատրաստելու «AZKOYEN NOVARA» տեսակի և թվով 4 հատ սննդի համար նախատեսված «AZKOYEN MISTRAL» տեսակի սարքավորումներ, շահագործման նպատակով դրանք տեղադրել է Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում: Կնքված պայմանագրերի համաձայն սարքավորումների հետ մեկտեղ Հայկ Ալթունյանին է հանձնվել նաև սարքավորումների մեջ առկա 195.500 ՀՀ դրամ գումարը, որը սարքավորումների հետ ենթակա է եղել վերադարձման ընկերությանը:

Ընկերության կողմից նշված սարքավորումները Հայկ Ալթունյանի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնելուց հետո, Հայկ Ալթունյանը իրեն վստահված ուրիշի գույքի յուրացում կատարելու դիտավորությամբ, յուրացրել է սարքավորումների հետ իրեն հանձնված զգալի չափերի՝ 195.500 ՀՀ դրամ գումարը և առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 20.436.881,4 ՀՀ դրամ արժողությամբ թվով 7 հատ սուրճ պատրաստելու համար նախատեսված «AZKOYEN NOVARA» տեսակի և թվով 2 հատ սննդի «AZKOYEN MISTRAL» տեսակի սարքավորումներ, որոնցից սուրճ պատրաստելու համար նախատեսված թվով 1 հատ «AZKOYEN NOVARA» տեսակի սարքավորումը 24.05.2018թ. վաճառել է Վահագն Օնիկի Դավթյանին, սուրճ պատրաստելու համար նախատեսված թվով 1 հատ «AZKOYEN NOVARA» տեսակի և սննդի համար նախատեսված թվով 1 հատ «AZKOYEN MISTRAL» տեսակի սարքավորումը 2018 թվականի ապրիլ ամսին Գոռ Գագիկի Ավագյանին, սուրճ պատրաստելու համար նախատեսված թվով 3 հատ «AZKOYEN NOVARA» տեսակի սարքավորումները 01.09.2017թ. մինչև 2018թ. Փետրվար ամիսն ընկած ժամանակահավտավծում՝ Արամ Շահենի Ղազարյանին, իսկ սուրճ պատրաստելու համար նախատեսված թվով 2 հատ «AZKOYEN NOVARA» տեսակի և սննդի համար նախատեսված թվով 1 հատ «AZKOYEN MISTRAL» տեսակի սարքավորումները՝ չպարզված ժամանակ՝ անհայտ անձին:

Բացի այդ, «AZKOYEN NOVARA» տեսակի սարքավորումը Վանագն Դավթյանին վաճառելուց հետո, երբ վերջինս պահանջել է տրամադրել առուվաճառքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագիր, Հայկ Ալթունյանը, փաստաթուղթ կեղծելու ուղղակի դիտավորությամբ, կազմել է «Այվենդինգ» ՍՊԸ տնօրեն Արման Կլջյանի կողմից Վահագն Դավթյանին նշված սարքավորումը վաճառելու վերաբերյալ 24.05.2018թ. թվագրված, իրականությանը չհամապատասխանող առուվաճառքի կեղծ

պայմանագիր, որտեղ կեղծելով Արման Կլջյանի ստորագրությունը և ընկերության կինքը, այն հանձնել է Վահագն Դավթյանին:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում 2018 թվականի հունիսի 14-ին ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14189918 քրեական գործը:

Նույն օրը քրեական գործը ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին և ընդունվել վարույթ:

29.06.2018 թվականին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի կարգով թիվ 17104618 և թիվ 14189918 քրեական գործերը միացվել են մեկ վարույթում, միացված գործին շնորհվել է 17104618 համար:

Նկատի ունենալով մեղադրյալ Հայկ Ալթունյանի կողմից ինքնակամ ներկայանալու հանգամանքը, և վերջինիս կողմից նախաքննության ընթացքում որպես կասկածյալ տված ցուցմունքնում հայտնած այն փաստը, որ իր կատարած ավազակային հարձակման մասին պատմել է ՀՀ ԱԱԾ աշխատակից Սարգիսին, քանի որ հասկացել է, որ իր ունեցած պարտքերի պատճառով ծրագրում է ավելի ծանր հանցագործության կատարում, ինչը կանխելու և չկատարելու նպատակով իր կատարած ավազակային հարձակման մասին հայտնել է հիշյալ Սարգիսին՝ իմանալով, որ վերջինս այդ մասին կհայտնի ՀՀ ոստիկանության համապատասխան մարմիններին, անհրաժեշտություն է առաջացել պարզել մեղադրյալ, կալանավոր Հայկ Ալթունյանի հոգեկան առողջության վիճակը և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր, որի համատեքստում 06.08.2018 թվականին որոշում է կայացվել Հայկ Էդիկի Ալթունյանի նկատմամբ ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքի փորձագետներին:

13.08.2018 թվականին որոշում է կայացվել միջնորդություն հարուցել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ թույլատրելու ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն կատարելու համար մեղադրյալ Հայկ Էդիկի Ալթունյանին /ծնված 28.08.1989թ., Կոտայքի մարզի Աբովյան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, նախկինում չդատված, աշխատում է Այվենդինգ ՍՊԸ-ում՝ որպես սպասարկող, հաշվառված Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի 6-րդ միկրոշրջանի 5Բ շենքի թիվ 23 բնակարանում, գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում/ 2018 թվականի օգոստոսի 16-ից տեղավորել ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքում, որը դատարանի կողմից բավարավել է:

16.08.2018 թվականին Հայկ Էդիկի Ալթունյանը տեղավորել է ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ստացիոնար հոգեբուժական բաժանմունքում:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել պարզել մեղադրյալ, կալանավոր Հայկ Ալթունյանի հոգեկան առողջության վիճակը և գործի համար նշանակություն ունեցող մի շարք այլ հարցեր, որի համար անհրաժեշտ են դատական հոգեբանության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ:

Նշված հարցի պարզաբանման համար և փորձագիտական եզրակացություն ստանալու նպատակով ներկայացվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի՝ Կրթության, հոգեբանության և

սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգաբանական գիտությունների թեկնածու Նարինե Եղիշի Ստեփանյանը (ծնված՝ 21.091970թ.), ով նշված փորձաքննության իրականացման համար տվել է իր համաձայնությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 248-249 հոդվածների պահանջներով.

## ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթիս թիվ 17104618 քրեական գործով Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի՝ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգաբանական գիտությունների թեկնածու Նարինե Եղիշի Ստեփանյանին ճանաչել փորձագետ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Նարինե Եղիշի Ստեփանյանը հայտարարեց, որ չի առարկում իրեն փորձագետ ճանաչելու դեմ:

**ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝** **Խ.Լ.ԳԱԼՍՏՅԱՆ**

Որպես փորձագետի իմ իրավունքներն ու պարտականությունները պարզաբանվել են, միաժամանակ նախազգուշացված եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ն. Ստեփանյան «04» 09 2017թ.